

128

85
D-77

1284
cm 24

23/4.84
388.972. Плюбник франц. дост-
епный разрек. Шумах.

404

ԱՅԻ ՄԱՆԿԱԿԱՆ

Ա ԳԻՐ

ԳՈԼԿԱՎՆԻԿ

Ֆ ՀՐ Ւ Ց

Տ-Ն ԹԱՐԳԱՄ.



ԱՐՄԵՆԻԱ ՏԵՐ-ԴԱՆԵԼԵՎՆԵՐ

ՀԱՅ-ՓՈԽ-ՎՐԱՅ-ՀԱՅ

1884

ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук

Ի Տպարանի Մեր Հաջանի Մահմակ-Վահարինց բան

ԲԱ

ՀՈՒՅԻ:

85

Դ-77

С 972

815

Դ-77

ՎԵՐ ՄԱՆԿԱԿԱՆ

II ԳԻՒՔ

ՊՈՂԿԱՎՆԻԿ

ՖԲՐԻՑ ԲԻBLIOTЕКА
1881 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԾՈՒՅՈՒՆԻՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԱ
ՎՈՏՈԿԵԶԵՆԻ
ՀԱՅ ՓԱՐԳԱ. Ակադեմիա Խաղաղ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅ-ԴԱՆԻԵԼԵԱՆՑ ՀԱՅ

ՀԱՅ-ԴԱՆԻԵԼԵԱՆՑ
ԱՐՄԵՆԻԱ ՅԵՐ-ԴԱՆԻԵԼԵԱՆՑ

ՀԱՅ-ԴԱՆԻԵԼԵԱՆՑ

1884

Ի Տպարանի Մերզաշանի Մահտեսի-Ցակորեանց:



№ 5498
853

Խոր սիրելի

և

Վագրանիկ եղբօրը

Առաջնային գրքի մասին պատճեն է այս գրքը

Առաջնային գրքի մասին պատճեն է այս գրքը

Երախտագետ սրառվ

Կուիրումէ

Թարգմանիչը:

50524-ահ

36409. 66



բայր, ով մայսեցաց վճաց մնամք և այ-
սպէս ամեն այս առաջ ու այս առաջ ու այս
ՊՈՅԻ ԱՌՎԵԼԻԿ Ը ՓՐԻՑ
ով Ա Առաջ միաժք չեն այս ըմբույթ չեն ցւանու
(այս) Այս ու դուքս կրծք ըմբույթ ու զի՞-
այ բանեան Տևառութեան չ մզչի ցար, ցառաւու-
մառաւու իւն: (Խոյ ամառնանին) Խոյ ամառնանին
ու Խոյ հայրենիքի Խոյնէօ կղզին է և
են ձնուել եմ նոյն խոկ տեղում:

ու ամ հայրը իւր կեանքի առնայսու-
մաք ժամանակը անցկացրեց Ըմերիկայի
հայցեալ Կահանգների Հասարակապետու-
թեան ծոսայելու: Ա երջազգէս նա թո-
քից իւր ծառայութիւնը և կամեցաւ կեան-
քի վերջնեւ օրեւը անցկացնել Խոյնէօ կրդ-
պումը, որ տեղ մի քանի տարի առաջ ա-
մուսնացել էր:

Ա նրա երախանների մէջ ամենափաքըն

1) Պալովնիկ ասում են այն պատճառաւ, որովհե-
տեւ ուր Ֆրեցին կապիկները կալցընէն, այն ժամա-
նակ նա շատ վարժ սովորեց կապիկութեանը, որ շա-
նակար է սովորեցնում էր լաւ ցատքել և այն կա-
պիկների ծառերն: Յաւեցուած:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐԴԱՐ

ԽԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Մեր այս „Խանկանան Վէպը“ թարգմանուած է
մեծ փոփոխութիւններով և շատ յաւելուածներով
աւելի ընդարձակելու և աւելի գեղեցկացնելու
պատճառաւ:

Ա. Տ. ԴԱՆԻԵԼԵԱՆՑ:

Էի և զեռմի քանի շաբթական էի, երբոր
հայրս թովնելով իւր ծառայութիւնը՝ բնա-
կուեցաւ պատկանեալ փոքրիկ հողում: Մեր
սունը մի կողմից նայումէ դէպի ծովը, իսկ
միւս կողմից դէպի բարձր ու մութ (խիտ)
անասուը, որը լիքն է ամենամեծ տեսակ կա-
պիկներով (մեյմուններով): Այդ անասուն-
ները միւս անասուններին հակառակ լի-
նելով՝ որոնք փոքր ի շատէ վախենում են
մարդից՝ վրայ են տալիս մարդուն չը վա-
խինալով մինչև անգամ հրացանից: Ունե-
նալով բաւականին բնական խելք, նոքա ա-
ռաջուց մտածում են յարձակման ճանա-
պարհը ու յետոյ յարձակում: “Երանցից՝
որոնք ամենազօրելիները են, զինուորուած
հաստ փայտերով կազմում են զօրքի ամե-
նագլուաւոր մասը, իսկ միւս բազմութիւնը
ամեն կողմից արձակում են քարեր թշնա-
մու վերայ և այնպէս ուղիղ, որ ոչ մէկն
անգամ զուր չի անցկենում: Երբեմն կա-
պիկները թշք կենալով ծառի ճիւղերի
մէջ, թոյլ են տալիս թշնամուն ազատ հա-

մարձակ անցնել իւրիանց մօտով, և յետոյ
նետի արագութեամբ վայր են գալիս ծա-
ռի վերայից հողի վերայ, ցատքում ուսե-
րը և սուր չանկերով գուրա են տալիս աշ-
քերը ու կրծում անբաղդի գլուխը:



Բ.

Ահա, սիրելի բարեկամներ, տեսէ՛ք
ինչպէս է իմ հայրենիքում մարդկանց զը-
րութիւնը՝ կապիկների ձեռին: (Այոննէօ
կզզու բոլոր բնակիչների մեծ մասը լշւրու-
պայի հասարակապետութեանը հաստատ
համոզուած են, որ այդ կապիկները մի ա-
ռանձին տեսակ մարդիկ են, և այդ մըսու-
քում նոքա (Այոննէօ կզզու բնակիչներ) ա-
ռաջի ես հաստատվում են, որ այդ կապիկ-
ները, որոնք սաստիկ կատաղած են մեծ
մարդկանց գէմ, ընդհակառակը ցայց են տա-
լիս առանձին սէր դէպի երախաններին և
կանանցը, որոնց վերայ շատ քիչ են յար-
ձակվում և սպանում: այլ միշտ կլանում

և թոցնում իւրեանց անտառի
խորքը, և ատերը և շատ ուսումնական
բնագէտներ այս վերջին անցքը առակ են
համարում, բայց յիմա ոչ ոք չի կասկա-
ծում դրա ճշմարտութեան վերաբէ, և ես
ինքս կարող եմ դառնալ դորան անքակտե-
լի ապացոյց: Ես արդէն ասացի ձեզ որ
մի քանի շարթական էի երբոր հայրս թող-
նելով իւր ծառայութիւնը բնակուեց պատ-
կանեալ գիւղում: Առաջին չորս տարբն իմ
կեանքը ոչ մի տպատորութիւն չը թողեց
յիշողութեանս մէջ և այդ պատճառաւ
էլ կարող եմ այն չորս տարբան անուանել
բաղդատոր, որովհետեւ բոլոր միւս յիշու-
տակներս ինչպէս սուր գանսակներ քրքրում
են սիրած: Ես չորս տարեկան էի: Մէկ
առաւօտ ես խաղ էի անում իմ դայեակիո
հետ մեր տան մօտ: Հենց այդ ժամանակ-
կը անտառից երեան եկան մի խումբ կա-
պիկներ, որոնք շըջապատեցին մեզ: Այդ
միջոցին իմ դայեակս մեծ աղաղակ հանեց,
որոյ ձայնին վերայ մեր ծառաները դուրս

վաղեցին, բայց ուշ էր: Հայոց ապա-
կապիկները մեղ վերառան և փախց-
րին անտառի խորքը և շուտով մեր ծառ-
անների գուգողուցը անհետացաւ իմ ա-
կանջից: Եւ անցմանը զա՞յ բայց գեցկուու
ասդ Վայեակիս գրութիւնը ինձ անյայտ
մնաց, որովհետեւ իմ միտքս չէ թէ ինչ-
պէս բաժանուեցանք միմեանցից: Ամ կեան-
քիս առաջի օրերը ծածկված էին մառա-
խուղով և ինձ երեսում էր ինչպէս վաղուց-
վայ տեսած երաղը, որ իմ յափշտակողնե-
րը գարմանալի արագութեամբ վագում են
հետո: Այն կապիկը, որը բանել էր ինձ
երեսում էր որ ամեն կերպիւ աշխատում
էր (ինձ) պահպանելու, որովհետեւ երբոր
կապիկների բոլոր լուսմբը կանգնեց, չորս
բոլորը շըջապատած անտառով հարթ ու
կանաչ գաշտի մէջ, որտեղ ինձ անվնաս
գրին գեանի վրայ: Ամ միաքա է որ այդ
անտառները մի առստիլ աղտղակ բարձ-
րացրին ու մէկ մէծ կապիկի գալուց յիշաց
բոլորը լուեցին. այդ կապիկը վերասաւ ինձ

և տարաւ հետը: Ինձ յափշտակելու առաջին օրերը չը գիտեմ ինչ պատահեց հետըս: Արդէն իմ յիշատակները պարզվում են այն ժամանակից, երբ որ ես բոլորովին սովորեցի այդ նոր կեանքին: Իմ յիշողութիւնս նկարագրում է մեծ և հանդիսարադին⁽¹⁾, որտեղ ես կենում էի կապիկի հետ միասին: Մէկ անկիւնում ածած թարմ խոտը մեր անկողինն էր: Իմ սնուցանով կապիկը շատ սիրում և փայփայում էր ինձ: Չը զիտեմ հասկանալի կը լինի ձեզ արդեօք այն զգացմունքները, որոնցով լիքըն էր այն ժամանակը իմ հոգին: Արդիքն օք, ձեզ զարմանալի չի երեկի, եթէ ես ձեզ խոտովանեմ, որ իմ սնուցչի սիրին՝ սիրով էի պատասխանում, փայփայանքին գրայփայանքով:

— Միք մոռանալ, որ ես չորս տարուց

1) Զաղեն-նշանակում է կապիկների այն որջը, որը շինած է լինում երեսքարերի մէջ տեղը, որի միակ կիւնում ածած է լինում թարմ խոտ, ուը ծառայում է անկողիու տեղ, միւս անկիւնում կերակուը և այն:

աւելի չեի և այդ քնքուշ հասակումը մարդուս հոգին չի ունենում այն զանազանութիւնը, որը յետոյ այնպէս պարզ գանաղանում է մարդին միւս անասուններից: Կայեցէք ուշադրութեամբ երեխու վերայ, որին կերակրում են պտուկով. դուք կը նկատէք, որ նա իւր սիրտը դարձնում է դէպի այն անշունչ առարկային և այն ժամանակը ձեզ աւելիք քիչ զարմանալի կ'երեկի իմ սիրտը դէպի այն անասունը, որը ունի փոքր ի շատէ բնական խելք:

¶.

Հս չորս տարուց աւելի էի այդ գըրութեան մէջ, շուտով ես սովորեցի հեշտութեամբ բարձրանալ ամենակոկ և ամենաբարձր ծառերի վերայ, մի խօսքով՝ մանգալու ժամանակը շատ քիչ էր յետ մնում իմ սնուցից, որը այդ պատճառաւ ուրախանում էր իմ առաջադիմութեան նայելով և միւնոյն ժամանակը նա չէր արգելում:

ինձ սիմսկ հեռանալու զաղից նա ուրանանում էր, երբոր ես յետ էի դառնում և բերում էի որս, վայդայանքով էր ընդդում ինձ՝ լրու բաղկանում է ընկուզից, բանանից եռուրիշ տեսակ պատռներից: Օ արմանակի է՞ որ միւս կաղիկները, որոնք պատահում էին հետո՝ ինձ էին մնասում, կարծես թէ այդ վայրենի աղջը ինձ որդեգրիլ էր իմ մնուցի պառեփ համոր: Ես բղորովին մոռացի էր խօսիլու ըստին ինչ պատճառաւ էի իմ մնուցը ինչ անուանում, Ֆու տու՛ և նա խկրին ձնաշում էր իւր անունը և յետ էր նայում:

Ամ մէջ այդ միակ ձայնն էր, որ նըմանում էր մարդկային ձայնին, իսկ միւս բաներով ես նմանում էի իմ մնուցըն, ես գոռում ու ճշում էի ինչադէս նա (սնուցիլ): Խմ անտառում գտնուած մամանակու ես բղորովին միտու չէի բերում իմ ծնողըն, որոնք՝ կապիկները ինձ անսելուց յետոյ թէ ինչ գրութեան մէջ էին, ոյլ ես բագ-

դաւոր էի: ֆուտուն ոչ միարովէ անդամ չէր փոխվում գէսի ինձ և ես չէի հասկանում նրա լեզուն, բայց նորա քննքուշ վայդայանքը և սէրը գէսի ինձ՝ հասկանալի էին իմ երախայական սրտին համար: Ես իմ կեանքումն շատ քիչ կին եմ տեսնելայդ հանդարտ, բարի, քաղցր, ուրախ ընութեան տէր: — Եւ աղ, այդ բարի անասունի բարոյական գերազանցութիւնը գընում է վրաս սաստիկ մեղք, որը կարելի է և մահիցս յետոյ հոգիս էլ տանջի: Եղա ուժիառու զոմ մեխանիկ, իշխան մասկուած կատար ու ուզ մատուցած այս ամբողջութեանը այլ ամբողջութեանը անձինչ է անձինչ: Մէկ առաւօտ եմ սովորաբար գնացի որսի, այդ օրը ինչ որ պատահեց հետո մշտական տպաւորուեց իմ յիշողութեան մէջ: Եհա թէ ի՞նչ է պատահել: — «Երբոր ես վագեցի բաւականին մեծ տարածութիւն՝ յանկարծ մեծ ծառի մեջ նկատեցի մի թռչունի բուն: Ինձ հա-

մար տեսնելն ու ծառ բարձրանալն մի վայր-
կեանի դործ էր: Ի՞այց ինչպէս նկարա-
գրեմ ես ձեզ այն զարմանալի տեսարանը,
որը բացուեց իմ առաջիս:»

«Իմ առաջիս բացուեց ինձ ծանօթ
ծովը իւր ամբողջ մեծութեամբ: Այս զար-
մանալի տեսարանը առաջին անգամ յափշ-
տակեց իմ ուշադրութիւնս: Ես մոռացայ
թաջունի բունը, իսկոյն վար իջայ ծառի
գագաթից և երկար մոռածելուց յետոյ
յանկարծ նայեցի մի կողմը՝ և ինչ, մի
նոր առարկայ, որը կայծակի արագութեամբ
զարթեցրեց իմ հին կեանքի յիշատակնե-
րը, Այդ առարկան իմ ծնողաց տօն էր:»

Անկաղթելի ոյժ հարկադրեց
ինձ զնալ մօտիկ մօտիկ դէպի այդ անծա-
նօթ առարկան: Ես վերջապէս դուրս եկի
անտառից և մօտիկացայ տանը, որտեղ
տեսայ ես մի քանի երախաներ, որոնք ան-
մեղ խաղերով էին զբաղուած: Ես կանգ-
նեցի նոցանից քիչ հեռու, որպէս զի նո-
քա ինձ ըստ նկատեն: Ա երջապէս ես ա-

ելի մօտացայ նոցա և տիսրտի ձայն հա-
նեցի իմ կուրծքից, ես ակամայ նոցա պար-
զեցի ձեռներս: Յանկարծ ես մի ծանօթ
ձայն լսեցի, դա իմ քրոջ ձայնն էր, որը
դեռ եօթը տարին լացած չէր. «Այ-
րի՛կ, մայրի՛կ, շուտով եկէք այստեղ՝ նա-
յեցէ՛ք, նայեցէ՛ք»: Ամրդկային ձայնը
վաղուցուայ մոռացած զդացմունքները զար-
թեցրին իմ հոգուս մէջ, բայց ես նոցա
չէի հասկանում:

Իմ բարի մայրը երեխոնց ձայնին
գուրս եկաւ մեղ մօտ և տեսնելով ինձ ձեռ-
ներս պարզած՝ կոչեց նա. «Ողորմած
Աստուած, այս Փրկիցն ¹⁾ է՛ և ընկաւ
վզովս:

Աի վայրկեանում շրջապատեցին ինձ,
իմ եղբայրները, հայրս, մայրս և մեր ծա-
ռաները: Այրս ինձ պինդ սեղմեց իւր
կուրծքին և փայփայում էր, իսկ անմեղս
չէի կարողանում նրա փայփայանքներին
պատասխանել: Յետակայ պատմութիւննե-

1) Որովհետեւ նըս անունը Ֆրից էր: Յա-

բԸ հասկացրին իմ ծնողացը այն, ինչ որ
պատահել էր ինձ հետ այն ժորտ տարրուայ
ընթացքում։

Ես կանգնած էի ինչպէս մի անջունչ
առարկայ։ Ամ անցեալ կեանքի մուժը՝
յիշատակները պատերազմուեմ էր իմ վայ-
րինի կեանքի առվորութիւնների և սիրոյ
հետ։ Իէպի իմ անուցիւը ունեցած ան-
հասկանալի տրոմութիւնը և ակամայ եր-
կիւղը յանկարծ սեղմեցին իմ պիտու, ես
գուացի «Տուտու, Տուտու» ուսաստիկ
կծեցի և վերասորեցի իմ մօրսձեռքը և
պուրապիծայ նրա գրկիցը։ Յարդար այս

6.

աղիւ թէ դժուարութեամբ բռնե-
ցին ինձ ձեռներս ու ոտներս կապեցին պինդ
որպէս զի չը կորեմ և չը փախչեմ, յե-

1) Մութն ասում է այն պատճառաւ, որովհետեւ
առ գետ չընկած կապիկութեան ավորութիւնների առ-
գեցութեան տակը նորա (Քըլցիք) մանկական կեանքի
իշատակները դեռ ես մութ էին։ Յաւելուած Ա. Տ. Գ.

ոյ տարան ինձ տուն, որտեղ մի քանի
ժամանակից յետոց ես հանդարտուեցի։
Ամ նոր մարդ փոխուելս կատարուեց
եւ քրառու փոքր, բայց բաւականին շուտ
ուաջին շարաթմներիս ես սկսեցի ձննաւել
մաղթականներիս և հասկանալ մարդկային
սօսքը ու շուտով ես ինքս էլ սկսեցի խօ-
սել որով ես իմ մօրս շատ էի ուրախոց-
նում, որովհետեւ նո վախենում էր թէ մի
գաւցէ ես կորցրած կը լինեմ իմ խօսելու
ընդունակութիւնս։ Ամ ծնողաց մօտ վկ-
րակառնալուց յետոյ երեք կամ չորս ամէ
սուց իմ կեանքիս մէջ ոչինչ մնասակար
փայրենութիւն չը մնաց, բացի սաստիկ ոյ-
ժից և թեթեռութիւնից, որ իրաւ ամբողջ
Բորնէօ կղզում ինձ պէս թեթեւ չը կար։
Ամ անտառում երկար մնալս ոչինչ մնա-
սակար ազգեցութիւն չէր ունեցել մինչև
անդամ խելքիս (մոքիս) վերայ։ Երևում
էր, որ ընութիւնը կամենում էր ինձ վայր
հատքել իմ կորցրած ժամանակուայ փոխին
րէնը, որովհետեւ լիր ուղարկած առաջարկը
առ գուացուած գուացուած գուացուած գուացուած
ՀՀ ԿԿ ԳՐԱԴԱՐԱՆ Ակադեմիա ԽՍՀ Ակադեմիա ԽՍՀ Ակադեմիա ԽՍՀ

թիւնը այնքան մեծ և արագ էր, որ շուտով անցայ իմ հասակակից բոլոր ընկերներիցս: Այսու ամենայնիւ իմ սրտիս խորքումը մնացել էր առանձին սէր դէպի իմ մոռցիչը, բայց հիմա ի՞նչ ծածուկ ստիպմունքով ես միշտ աշխատում էի ծածկել այդ զգացմունքը իմ ծնողներից: Վարելի է այդ սորանից լինի, որ իմ ծնողքն միշտ ցոյց էին տալիս առանձին զգուանք դէպի կապիկը: Այդ անբաղդ անասունները այնպիսի սարսափ էին ձգել ամբողջ Բորնէօ կղզու բոլոր բնակիչների վերայ, որ նոցանից մէկին սպանելը համարում էին մինչև անդամ մի ամենայաջող անցք: Ես շատ անդամ մոռածում էի թէ մի գուց'է իրբարի Ծուտուն տրոտմելով այսքան ուշանալուս պատճառաւ, մանգայ ինձ գտնելու համար անտառումը ամեն սեղ թէ զաղանների և թէ ծառերի ճիւղերի մէջ: Ես մտածելուս վերայ սարսափում էի, չը լինի թէ իմ սրուցիչը ինձ գտնելու համար մօտենայ մեր առնվ և այն ժամանակ իմհօր կամ մեր

ծառաների անողորմ գնդակը (գիլլէն) ծակէ նորա սիրով և ես կը տեսնեմ նրա աղիողորմ լալը մեր բակում քաշ տալու ժամանակ: Ես երեակայսւմ էի, որ իմ աչքի առաջ իմ բարերարին, իմ երկրորդ մօրը անողորմաբար քըքրում էին և նրա անդամները քցում էին սոված շների առաջը: Այդ բոպէին յուսահատութիւնը սեղմում էր իմ սիրտը: — Ես լսեցի ինձ ծանօթ տուտուի ձայնը:

Ինձ երեւում էր, որ նա կանչում էր ինձ իւր մօտ և ես էլ համարե՛ա թէ պատրաստ էի գնալու (վերագտոնալու) կրկէն անգամ անտառը իմ սնուցչի մօտ նրան չը տրտմեցնելու պատճառաւ: Անցաւ մօտ երեք տարի իմ ծնողաց տունը վերագտոնալուց յետոյ:

— Ո՞էկ երեկոյ բոլոր մեր գերդաստունը հաւաքուած մեր տան առաջի դաշտումը՝ զուարձանում էինք թարմ օդով:



Համ (մշյաց) ունարա Ապողուած հայմանած
ավա ազմ նեռ մեռ մեռ մեռ մեռ մեռ
Մեզանից չորս վերստ Տեռաս որու-
թեան վերայ գտնվում էր մեր ծանօթ ան-
տառը: Յանկարձ մենք մի սաստիկ ձայն
լսեցինք անտառիցը: ևս խալոյն վեր թռայ
տեղից ու ձանսացեցի իմ խեղճ Տուտուի
ձայնը: «Ես ի՞նչ ձայն է» հալցրեց
մայրս: «Ես մի քանի ժամանակս այդ ա-
նիծած կապիկները սկսել են կրկին երեալ
մեր տան մօտ, բայց ալրէն ես իմ պատ-
րաստութիւնս տեսել եմ. մենք միշտ էր
ունենանք պատրաստ հրացաններ, որ այդ
անիծեալ կոտիկները մեր տան վերսոյ յար-
ձակուելուն պէս՝ մենք մեր սրտի ոխը հո-
նենք նորանից»: Եսդ խօսքերը լսելուն
պէս սարսափեցի և սառսուուր անցու մար-
մընովս, ես պատրաստ էի իմ կեանքս զո-
հելու՝ միայն թէ կարողանամ զգուշացնել
իմ սեռցին, բայց իմ ետեւից խիստ նա-
յում էին մեր անացիք, որով հնար չը
կար, թէ կուղ սնտառն է մօտիկ էր: Եմ

յուսահատութիւնս աւելի ստատկացաւ, երբ
որ տեսայ՝ որ բան չեմ կարողանաւմ տնեւ
լունես լոց եղայ: Եմ հայրո նկատեց ի-
տեսաւ որ լաց եմ լինում, ընկաւ մօրս ա-
կանջին: և մի խօսք ասեց ու վեր առան ինձ
տարան տուն և քնացրին: Եմ անկողինը
գտնուում էր լրաւամուտի մօտ: Ես լսում
էի ինչպէս թողնում էին շնչերը և պուր-
տում էին մեր ծառաները տան չորս կող-
մը ու շիշլսկացնում էին հրացաններով:
«Սորանցից մէկը կանգնեց լրաւամու-
տի առաջ ու ես լսեցի սումբի և չախմա-
խի ձայնը, որով սառը քրոխնքը պատեց
ինձ: Ես ամբողջ զիւերը այօմք էի ա-
նում միեղջ Տուտուի ազատութեան համոր:

Ե.

Մի քանի օր էլ զեռ ևս մեր ծա-
ռաները պահպանում էին տունը կապիկ-
ների յարձակումներից: Ես չեմ կորող նը-
կարագրել ձեզ այն զբութիւնը, յորում

գտնվում էի: Ահարկէ ես պէտքէ ծածկէի իմ
զգացմոնքներս, որովհետեւ ոչ ոք չէր հար-
նում նոցա, այլ բոլորքեանք էլ սարսա-
փանքով ու զղուանքով էին խօսում նրա
վերայ, որին ես սաստիկ սիրում էի: Ա եր-
ջապէս իմ ծնողները, երևում է որ էլ այն
պէս խիստ չեն վախենում, ինչպէս առաջ
էին, գիշերուայ սպահապահներն (որոնք մեր
ծառայներից էին բաղկացած) էլ այնպէս
խիստ չէին, ինչպէս առաջ, և յետոյ բո-
լորո ին գագարէցին: Խայց ես էլի չը կա-
րողացայ հանգստանալ: Այն միտքը, որով
իմ անբազր մնուցիչը կարող է բռնուել և
սպանուել ինձ շատ էր տանիջում և ամեն
անգամ երբ որ ես պարկում էի քնելու, ա-
կանջ էի դնում լուսութեամբ, արդե՛օք չեմ
լսել ինձ ծանօթ ձայնը:

Ա՛էկ գիշեր ես յանկարծ լսեցի, որ
մէկը չանկուտում է լուսամուտս. ես վեր
կացայ անկողնից և արդար, հանդարտ ու
համեստ լուսնիակի լուսով ճանաշեցի իսկոյն
իմ մնուցին:

Ինչպէս նկարագրեմ ձեզ այն բոլորը
ինչոր պատահէց հետս նոյն իսկ միջոցին.
ուրախութիւնը, որ նրան տեսնում եմ, եր-
կիւղը, որ չը լինի թէ մի գուցէ նրան
բռնեն և սպանեն, այդ երկուսը փոխեփոխ
վըզովում էին սիրուս: Ես կամաց բաց ա-
րի լուսամուտը. նա մեկնեց ինձ իւր թա-
թը, որին սեղմեցի կուրծքիս: «Սորան քըն-
քոյշ փայփանքները միտս բերին իմ ան-
տառում անցկացրած բարդաւոր և անհոգ
կեանքս: Ես ցանկարայ վերտպանալ կըր-
կին անգամ անտառը, բայց սէրը, որ ես
ունէի զէպի իմ ծնողքս, եղբայրներս և
քոյրերս՝ յաղթեցին այդ ցանկութեանը: Ես
այն ժամանակը տասն և մէկ տարե-
կան էի և հասկանում էի իմ բոլոր արժա-
նաւորութիւններս:

Չը նայելով, որ ես շատ ու շատ էի
սիրում իմ խեղջ Տուտուին, այնու ամե-
նայնիւ հասկանում էի մարդոյ և կապիկ-
ների մէջ եղած զանազանութիւնը: «Սո-
րան ես փայփայելով աշխատեցի ցոյց տալ-

Նշաններով որ նա հեռանայ, որպէս զի մեր
անդութիւ ծառ աները լրջ գան և ցըսպաննեն
նրան, կործես թէ Կո հաւաքացաւ ինձաւ
ածա և կայծակի արտղութեամբ փախան
և հեռացաւ աչքիցս: Ամեարա և մմայ
ա բայ բանավ **ՏԱԿՈ** մի և նախորդ
ամ զայ նմի բարձր առ ցանձաւոյ գի
մայ մազոյ: Խոցոցով վըմբան մից ցի
ամ և այս սովոր գրամակից ակամած իմ բարի
Տուազն ամեն գիշեր գաղիս եր իմ տե
սու թէ ան և երկար ժամանակ է ակում
մեր տեսութիւնը առանց աշգելքի: Այս
սպորտբար սպասում էի մինչև նրա գալու
տեանը: Խմ առ աչքերը հեռուից իսկոյն
ճանաչում էին նրան (մուռցչն) չը նայե
լով գիշերուայ մութին և ես առաջուց բաց
էի անում լրասամուտը՝ միայն թէ կիսատ
պատճառն որ ես երբեմն քնում էի շատ
նամելուց և այն ժամանակը Տուազն բգ
գութեամբ աւելի էր բաց անում պա
տուհանը ու թաթը մեկնելով դեպի ինձ

և կարծես թէ Տուտուն մեր խաղերին
մասնակից էր: Ինձ երեռում էր, որ իմ
աղքականներից ոչ ոք չի զգում այն ատե-
լութիւնը, որն որ այնքան առասավանքով
առասափեցնում էր ինձ արթիւն ժամնա-
կրս, ընհակառակը նոքա սիրսւմ էին իմ
խեղճ Տուտուն և իմ հոգիս լողում էր ու-
րախութեան մէջ այդ պատճառով: Յան-
կարծ մի սաստիկ ձայն լսեցի, ես զարթ-
նեցի և վեր թռայ անկողնիցս: Խմ առա-
ջիս կանգնած էր հոյրա, բարկութիւնը ե-
րեռում էր նրա երեսին տմեն գծերի վերայ,
ձախ ձեռին բռնած ունէր վառուած լապ-
տերը, իսկ աջ ձեռին --հանած թսւրը:
Ես խսկոյն ճանաշեցի իմ խեղճ Տուտուի
ձայնը և երկնչերով նայեցի հօրս վերայ:

«Ես չը կարողացայ սպանել այդ ա-
նիծած կապիկին», ասաց հոյրս: «և յոյս
ունեմ սակայն, որ նա սորանից յետոյ էլ
չի կտրիլ քո քունը» (գառնալով դէպի ինձ):
Պայրս մոտաւ սենեակը և գոռաց: «Ես
ի՞նչ է նշակում, Փրիցի անկողինը արիւ-

նոտ է»:

«Ոչինչ չը կայ», պատասխանեց հոյրս.
«Նոր սենեակի մօտով անցնելիս՝ ես լսեցի-
որ մէկ բացէանում պատուհանը, ես նայեցի
գոնիցը և տեսայ մեծ կապիկին լրյմնեակի
լոյսի առաջ, որ կանգնած էր Փրիցի լուսա-
մուտի մօտ: Ես վազեցի սենեակս, վեր առայ
թուրը և լսապոերը ու հասայ այն բուգէին
երբ կապիկը բաց էր արել պատուհանը և
մեկնել էր թաթը Փրիցին: Որքան ու-
ժաման կար խփեցի ես թրով և կտրած թա-
թը ընկաւ մի կողմը, իսկ կապիկը փախաւ
անտառը: Վարծում եմ, որ նա էլ չի ցան-
կանալ Փրիցի մօտ գալ»:

Երկար ժամանակ ես ուշքի չեկայ և
չէի հասկանում ինչ էր լինում հետոս: . . .
Սարսափելով նոյն ցի անկողնիս վերայ, աե-
սի որ իմ խեղճ Տուտուի թաթը կտրած
և ընկած է ոսներիս տակը:

. . . Վատաղութիւնս բռնեց:
Հայրս թուրի ծայրով բարձրացրեց
թաթը և ձգեց բաց արած պատուհանից

Պիտս չէ, թէ նորանից յետոյ ինչ
պատահեց հետա, կարծում եմ, որ ես ու-
շամբախ եղայ . . . ։ Յանձն վահեն զո՞ւ-
Ախուս օքը հայրս և մայրս ամեն կեր-
պիւ աշխատում էին փախցնել ինձ ռան-
ջող արդմութիւնը, բայց ես չեի պատաս-
խանում նորա մայմայանքներին։ Եմ ազը-
տիս մէջ ծնել էր մի այնպիսի զգացմունք
որը ինձ հեռացնում էր նորանից։ Ես կար-
ծում էիս որ ես էլ այնպէս չեի սիրում
հօրո՞ւի նշակէս առաջ էր։ Ես չեի կարո-
ղանում նրան չը տեսնել իրու իմ խեղա-
Տուտուին մնապող որին եց սովորել էի
պատուել ինչպէս իմ բարերարին։ յանձ-
նուի դաշտ ու խանուն զայդ։

Փ.

Եթեկոյեմն ես գուրս եկայ դռան ա-
ռաջը, երեկուայ յիշատակը սեղմեց իմ
սիրոս։ Ես կամ ցայ ծծել մաքուր օք, ես
նկատեցի՝ որ մէր մէջ շունը, տան առա-
ջի դաշտում, խազ էր անում մէկ առար-
կայի հետ, որին ես չը կարողացոյ զանտ-

զանել։ Ես ինքս էլ եմ իմանում թէ ին-
չու համար միտս ընկաւ կանչել շանը,
բեր։ Կոյն րոպէին նա բերաւ ինձ մօտ
բերանում բանած, իմ խեղձ Տուտուի կըտ-
րած թաթը։ Ես իսկոյն ձանաչեցի նրան
և ուշաթափ ընկայ զետնին։ Եւ յդ տիտոր
անցքը իսոր տպաւորութիւն թողեց իմ
բնութեան վերայ։ Ես թողեցի իմ երա-
խայութիւնս։ Երեխայոց խաղալիքները եր-
բէք չէլն գրաւում ինձ դէպի իւրեանց։
Ես սկսեցի ուսանել և կարդում էի լու,
բայց երբոր հանգստութեան ժամկուն եղ-
բայցներս և քոյրերս ուրախանում էին ի-
րենց տարիների յարմար խաղերով, ևս նըս-
տում էի միայնակ տիտոր մոտածութիւնն
մէջ և ծնորաց դուր տշխատանքը ինձ ու-
րախայնելու համար գուր էին։ Եմ խեղձ
Տուտուից տեղեկութիւն չունեի և չեր ի-
մանում արգեօք նա կենացանի մնաց վեր-
ջին տեսութիւնից յետոյ, թէ չէ։

ԺԱ.

Եւսպէս անցկացաւ մի քանի տարի։
Իմ քոյրերս ամուսնացան և իմ եղբայր-
ներս էլ մտան ծառայութեան մէջ։ Ես տա-
սըն և ութ տարեկան էի, երբոր հայրս
վախճանվեց, յետոյ մայրս էլ շուտով մե-
ռաւ նորա ետևից ու ես մնացի միայնակ
իմ ցաւերիս հետ։


Ես փախչում էի բարեկամներիցս։ Բո-
լոր հարեւաններս ինձ Ճանաչում էին միայն
լուռ Պրիցիս անունով։

ԺԲ.

Իմ ժամանակս անց էր կենում կար-
գալու և ոյլեպանութեան մէջ։ Ես գը-
նում էի ման գալու միայնակ, իմ ուսիս
քցած հրացան, բայց միակ նրա համար, որ
Բարինէօ կզդու բողոր բնակիչները հրացա-
նով էին ման գալիս։ Ո՞իսյն այս մանգա-
լու ժամանակը, երբէք չը պատահեց՝ որ
ես իմ հրացանը գործ դնեմ։ Կարծես իմ
և միւս սորսափելի բնակիչների մէջ դրու-

ած էր կապակցութիւն, որը տրգելում էր
նոցա՝ (կապիկներին) վրայ տալինձ։ Ո՞ի
անգամ այդպէս մանգալու ժամանակ նըս-
տեցի կոկոսի ծառի տակ հանգստանալու։
Ես լսեցի մի խշխոց, որը լսուեց ծառի
ամենաբարձր կէտիցը։ Ես վլուխս բարձ-
րացրի և տեսայ մեծ կապիկն, որ տան-
դաղ կերպիւ վար էր իջնում գէպի ինձ։
Ես յատեսարանը, որ ամեն մի ուրիշն կը
բերեր սարսափանք, ինձ չը վախցրեց։ Ես
սկսեցի երկար նոյել կապիկի վերայ և նը-
կատեցի որ մի թաթը չունէր, այն ժա-
նակը իմ բողոր կասկածներս անցկացաւ, այն
կապիկը Տուտուն էր։ Խեղճ կենդանին
ինձ Ճանաչեց և իրան ձգեց գէպի ինձ։

Դնշում էր, թուշկոտում էր, փայ-
փայում է, մի խօսքով նա աշխատում էր
ամեն կերպիւ ցոյց տալ ինձ իւր ուրախու-
թիւնը։ Ես պատասխաննեցի նրա փայփայ-
անքներին և չը կարողացայ պահել ար-
տասուքս, տեսնելով նա վմասուած և միտո
բերելով, որ նորա պահը է՝ նրա անբաղ-



գութեան պատճառը: Ելոցքարան ոչ ուս
ԽՍ Ամեն օր ես գնում էի անտառը իմ
խեց Տուտուին տիսութեամ: Ես տես-
նում էի նրան միայնակ և նրա մեջ միակ
կենսանի որը ինձ հետ ունետ մասնակցու-
թիւն և իմ սէրը դէպի նայ օր ըստ օրէ
աւելանում էր:

1884 թ. Յունիսի 25—29. Ի Հայոց:
0804172

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Գ. Բ. ԲԻBLIOGRAPHIA
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ա. Ա. ՄԱՏԻԿԱՆԻ ԱՆԳԱՄ

ՎՐԱՀ ԱՎԱՐԱՐԱ
925

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004178

128

104

С арм-и
972

Դիմ է
10 պողկ.

Института
Востоковедения
Академии Наук
ССР

